ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/164

ք. Երևան «15» 09 2020 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամն, ի դեմս հիմնադրամի ռեկտորի ժ/պ՝ Ե. Վարդանյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **տեխնիկական հսկողության ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 **Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետը սահմանել 1 տարի:**

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **15 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **7722000 (յոթ միլիոն յոթ հարյուր քսաներկու հազար)** ՀՀ դրամ, որից **1287000 (մեկ միլիոն երկու հարյուր ութսունյոթ հազար)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

Ընդ որում՝

1-ին չափաբաժին՝ 3990000 (երեք միլիոն ինը հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

2-րդ չափաբաժին՝ 1704000 (մեկ միլիոն յոթ հարյուր չորս հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

3-րդ չափաբաժին՝ 2028000 (երկու միլիոն քսանութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների

աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող

պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	ք. Երևան, Տերյան 105
Կառավարական տուն 2,	Բանկ՝ <<Արարատբանկ>> ԲԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	Հ/Հ՝ 15100-01964940200
Հ/Հ	ՀՎՀՀ՝ 01506385
1-ին չափաբաժին՝ 900011035251	
2-րդ չափաբաժին՝ 900011027977	
3-րդ չափաբաժին՝ 900011027969	
ՀՎՀՀ 02698732	
Գլխավոր քարտուղարի տեղակալ՝	**Ռեկտորի ժ/պ՝**
_____ **Վ. Գասպարյան**	_____ **Ե. Վարդանյան**
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«15» 09 2020 թ. կնքված
ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/164 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ								
Հ/Բ	ԳՄԱ դասակարգման կոդ (CPV)	Անվանումը	տեխնիկական բնութագիրը Գնման առարկա է հանդիսանում.	չափման միավորը	ընդհանուր գինը, ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն Ըստ օբյեկտների	Ժամկետները*
1	71351540/135	տեխնիկական հսկողության ծառայություններ-1	«Ալավերդու Ստ. Շահումյանի անվան թիվ 5 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի սանհանգույցների և տանիքի (այդ թվում ինժեներական կոմունիկացիաների և շինարարական էլեմենտների) հիմնանորոգման և նորերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը	դրամ	3990000	1	ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Խուդյակովի 2ա	Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից և իրականացվում է յուրաքանչյուր Չափաբաժնի համար նախատեսված կրթական օբյեկտների վերանորոգման աշխատանքներին զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը:
			«Տաշիրի Արտակ Խաչատրյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի սանհանգույցների և տանիքի (այդ թվում ինժեներական կոմունիկացիաների և շինարարական էլեմենտների) հիմնանորոգման և նորերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը				ՀՀ Լոռու մարզ, ք. Տաշիր, Սայաթ-Նովա 5	
			«Վաղարշապատի Գրիգոր Նարեկացու անվան N 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի հանդիսությունների դահլիճի և սպորտ դահլիճի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը				ՀՀ Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Մաշտոցի 72/2	
			«Եղվարդի N 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի պարսպի վերանորոգման աշխատանքների աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը				ՀՀ Կոտայքի մարզ, Եղվարդ, Չարենցի 54	
			«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ավագ դպրոցի սպորտ դահլիճի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը				ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Թումանյան 85	

2	71351540/138	տեխնիկական հսկողության ծառայություններ-2	«Քաջարանի թիվ 5 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը	դրամ	1704000	1	ՀՀ Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Լեռնաձոր համայնքի Բարիկավան 3/1	
			«Սպանդարյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը				ՀՀ Սյունիքի մարզ, գ. Սպանդարյան 3-րդ փողոց, շենք 23	
			«Ա. Սարգսյանի անվան Տեղի N 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը				ՀՀ Սյունիքի մարզ, գ. Տեղ, Սիրան Բարխուդարյանի անվան փողոց 7	
			«Հրանտ Ոսկանյանի անվան Կապանի թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը				ՀՀ Սյունիքի մարզ, ք. Կապան, Բարաբաթում 2-1	
			«Եղվարդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը				ՀՀ Սյունիքի մարզ, գ. Եղվարդ	
			«Սիսիանի N 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը				ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Նար-Դոսի 1	
			«Սիսիանի հ. 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը				ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Շիրվանզադե 7	
			«Սիսիանի հ. 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը				ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Կամոյի 3	
			«Երևանի Հենրիկ Խաչատրյանի անվան հ. 199 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը				Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ.	
			«Երևանի Մ. Սարյանի անվան հ. 86 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը				Երևան, Բագրատունյաց 45	

			«Երևանի Ստեփան Շահումյանի անվան հ. 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը				Երևան, Մաշտոցի պող. 33	
			«Երևանի հ. 136 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը				Երևան, Լեփսիուսի 6	
			«Երևանի Սիլվա Կապուտիկյանի անվան հ. 145 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը				Երևան, Հովսեփ-Էմինի 8	
			«Երևանի Հ. Օշականի անվան հ. 172 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը				Երևան, Մ. Բաղրամյան պող. 59ա	
			«Երևանի Ղ. Աղայանի անվան հ. 63 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը				Երևան, Կիևյան 9	
			«Երևանի Ռ. Սևակի անվան հ. 151 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը				Երևան, Բաբայան 40	
			«Երևանի Վ. Վաղարշյանի անվան հ. 80 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը				Երևան, Ծովակալ-Իսակովի 2/1	
			«Երևանի հ. 163 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը				Երևան, Նոր-Նորքի 6-րդ զ., Գյուրջյան 13	

			«Երևանի հ. 156 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը				Երևան, Շիրազի 11	
			«Սպիտակի Անանիա Շիրակացու անվան N 8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը				ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Երևանյան խճ. 1	
3	71351540/137	տեխնիկական հսկողության ծառայություններ-3	«Ալավերդու պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը	դրամ	2028000	1	ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, 3/6ա շենք	
			«Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի մասնաշենքի մասնակի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը				Երևան, Գլինկայի 2	
			«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ-ի դահլիճի վերանորոգման աշխատանք-ների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը				Երևան, Բագրատունյաց 71	
			«Արարատի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի մասնաշենքի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը				ՀՀ Արարատի մարզ, ք. Արարատ, Կոմիտասի 12	
			«Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի պարասրահի հատակի փայտի ապամոնտաժման և նոր հատակի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը				Երևան, Բայրոնի 5	

Տեխնիկական առաջադրանք

Նախատեսվում է.

- Հիմնանորոգող կազմակերպության կողմից Պատվիրատուին աշխատանքները հանձնելու վերաբերյալ համապատասխան ակտերի և արձանագրությունների ստուգում, կազմում, ստորագրում: Հիմնանորոգման աշխատանքների ավարտից հետո Ծառայության մատուցման հանձնման-ընդունման արձանագրության հետ հաշվետվության ներկայացում՝ վերականգնման աշխատանքների, (այդ թվում՝ ծածկված աշխատանքների) թվային լուսանկարների, կատարված աշխատանքների սխեմատիկ գծապատկերների ներառմամբ՝ ըստ սահմանված կարգի և լիազորությունների:
- Արտահերթ ստուգումների կատարում՝ Պատվիրատուի պահանջով:
- Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն ՀՀ Քաղաքաշինության նախարարի 28.04.1998 թ.-ի N 44 հրամանով հաստատված շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգով և Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում:
- Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետ սահմանել 1 տարի:

**** Չափաբաժիններում նշված յուրաքանչյուր կրթական օբյեկտի տեխնիկական հսկողության ծառայությունների իրականացման համար նախատեսված գումարի չափը՝ համաձայն կից Տեղեկանքի:***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վ. Գասպարյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Ե. Վարդանյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՏԵՂԵԿԱՆՔ

Չափաբաժինը	Անվանումը	Կրթական օբյեկտի անվանումը	Ըստ չափաբաժինի Ընդհանուր գինը, ՀՀ դրամ	Ըստ կրթական օբյեկտի յուրաքանչյուր ծառայության գինը
1	տեխնիկական հսկողության ծառայություններ-1	«Ալավերդու Ստ. Շահումյանի անվան թիվ 5 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի սանհանգույցների և տանիքի (այդ թվում ինժեներական կոմունիկացիաների և շինարարական էլեմենտների) հիմնանորոգման և նորերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում	3990000	1570000
		«Տաշիրի Արտակ Խաչատրյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի սանհանգույցների և տանիքի (այդ թվում ինժեներական կոմունիկացիաների և շինարարական էլեմենտների) հիմնանորոգման և նորերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում		990000
		«Վաղարշապատի Գրիգոր Նարեկացու անվան N 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի հանդիսությունների դահլիճի և սպորտ դահլիճի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում		780000
		«Եղվարդի N 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի պարսպի վերանորոգման աշխատանքների աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում		380000
		«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ավագ դպրոցի սպորտ դահլիճի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում		270000
2	տեխնիկական հսկողության ծառայություններ-2	«Քաջարանի թիվ 5 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում	1704000	70000
		«Սպանդարյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում		79000
		«Ա. Սարգսյանի անվան Տեղի N 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում		34000
		«Հրանտ Ոսկանյանի անվան Կապանի թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը		90000
		«Եղվարդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը		93000
		«Սիսիանի N 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում		45000
		«Սիսիանի հ. 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման		108000

		աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում		
		«Սիսիանի հ. 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում		97000
		«Երևանի Հենրիկ Խաչատրյանի անվան հ. 199 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում		123000
		«Երևանի Մ. Սարյանի անվան հ. 86 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում		113000
		«Երևանի Ստեփան Շահումյանի անվան հ. 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում		136000
		«Երևանի հ. 136 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում		79000
		«Երևանի Սիլվա Կապուտիկյանի անվան հ. 145 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում		96000
		«Երևանի Հ. Օշականի անվան հ. 172 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում		94000
		«Երևանի Ղ. Աղայանի անվան հ. 63 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում		65000
		«Երևանի Ռ. Սևակի անվան հ. 151 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում		46000
		«Երևանի Վ. Վաղարշյանի անվան հ. 80 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում		47000
		«Երևանի հ. 163 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում		81000
		«Երևանի հ. 156 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում		125000
		«Սպիտակի Անանիա Շիրակացու անվան N 8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում		83000
3	տեխնիկական հսկողության	«Ալավերդու պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում	2028000	185000

	ծառայություններ-3	«Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի մասնաշենքի մասնակի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում		351000
		«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ-ի դահլիճի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում		290000
		«Արարատի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի մասնաշենքի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում		860000
		«Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի պարասրահի հատակի փայտի ապամոնտաժման և նոր հատակի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում		342000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

02698732

----------**Վ. Գասպարյան**

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

----------**Ե. Վարդանյան**

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված թիվ 2
«15» 09 2020 թ. Կնքված
ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/164 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության									
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	71351540/135	տեխնիկական հսկողության ծառայություններ-1			3990000	3990000	3990000	3990000	**3990000**
2	71351540/138	տեխնիկական հսկողության ծառայություններ-2			1704000	1704000	1704000	1704000	**1704000**
3	71351540/137	տեխնիկական հսկողության ծառայություններ-3			2028000	2028000	2028000	2028000	**2028000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

02698732 ----------**Վ. Գասպարյան**
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

----------**Ե. Վարդանյան**
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 5.1
ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/164 ծածկագրով
գնանշման հարցմանհրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Երևան « 14 » 09 2020թ.

"Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան" հիմնադրամը (այսուհետ՝ ՃՇՀԱՀ հիմնադրամ), ի դեմս ռեկտորի ժ/պ Ե. Վարդանյան (Ն/Ք 000052571, տրվ. 22.11.12թ. 012-ի կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է **Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության** (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ **ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/164** ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.5 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.6 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.7 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.8 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.9 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում,

Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

ՃՇՀԱՀ հիմնադրամ

ք. Երևան, Տերյան 105

<<Արարատբանկ>> ԲԲԸ

Հ/Հ 15100-01964940200

ՀՎՀՀ 01506385

Ռեկտորի ժ/պ՝ Ե. Վարդանյան

ստորագրությունը

Կ. Տ.

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ **"Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան" հիմնադրամ**

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **<<Արարատբանկ>> ԲԲԸ**

6. Վճարողի հաշվի համարը՝ **15100-01964940200**

7. Վճարողի ՀՎՀՀ՝ **01506385**

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ **Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն**

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ **02698732**

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900005000758**

14.Գումարը (թվերով և բառերով)՝ **772 200 /յոթ հարյուր յոթանասուներկու հազար երկու հարյուր/**

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ (AMD)**

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝
Ծածկագիր՝ **ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/164**

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ N 0825
"09" սեպտեմբերի 2020թ. **Էլեկտրոնային**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

Դեբետ	Կրեդիտ	Գումար	
15100-01964940200	90000-8000698	AMD	4,094,130.00

Վճարող
Ճարտ. և Շինար. Հայաստանի ազգային համալ. հիմնադրամ
Վճարողի ՀՎՀՀ 2301506385
Վճարողի բանկ
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Բանկի կոդ՝ **15100**

Հաճառու
Կենտրոնական գանձապետարան
Հաճառուի բանկ
Կենտրոնական գանձապետարան Բանկի կոդ՝ **90000**

Գումարը բառերով
Չորս միլիոն իննսունչորս հազար հարյուր երեսուն դրամ
Վճարման նպատակը
Որակավորման ապահովում, ծածկագիր ՀՀԿԳՄՄՆԳՀԵՁԲ-20/164 1-ին չափաբաժին

Կ. Տ. Հաճախորդի ստորագր.՝ _____

_____ Բանկի ստորագր.՝ _____

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ N 0826
"09" սեպտեմբերի 2020թ. **Էլեկտրոնային**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

Դեբետ	Կրեդիտ	Գումար	
15100-01964940200	90000-8000698	AMD	1,741,810.00

Վճարող
Ճարտ. և Շինար. Հայաստանի ազգային համալ. հիմնադրամ
Վճարողի ՀՎՀՀ 2301506385
Վճարողի բանկ
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Բանկի կոդ՝ **15100**

Հաճառու
Կենտրոնական գանձապետարան
Հաճառուի բանկ
Կենտրոնական գանձապետարան Բանկի կոդ՝ **90000**

Գումարը բառերով
Մեկ միլիոն յոթ հարյուր քառասունմեկ հազար ութ հարյուր տասը դրամ
Վճարման նպատակը
Որակավորման ապահովում, ծածկագիր ՀՀԿԳՄՄՆԳՀԵՁԲ-20/164 2-րդ չափաբաժին

Կ. Տ. Հաճախորդի ստորագր.՝ _____

_____ Բանկի ստորագր.՝ _____

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԲԱՐԱԳԻՐ N 0827
"09" սեպտեմբերի 2020թ.

ԱԲԱԲԱՏԲԱՆԿ ԲԲԸ — **Էլեկտրոնային**

Դեբետ	Կրեդիտ	Գումար	
15100-01964940200	90000-8000698	AMD	2,133,929.00

Վճարող
Ճարտ. և Շինար. Հայաստանի ազգային համալ. հիմնադրամ
Վճարողի ՀՎՀՀ 2301506385
Վճարողի բանկ
ԱԲԱԲԱՏԲԱՆԿ ԲԲԸ Բանկի կոդ՝ 15100

Հահառու
Կենտրոնական գանձապետարան
Հահառուի բանկ
Կենտրոնական գանձապետարան Բանկի կոդ՝ 90000

Գումարը բառերով
Երկու միլիոն հարյուր երեսուներեք հազար ինը հարյուր քսանինը դրամ
Վճարման նպատակը
Որակավորման ապահովում, ծածկագիր ՀՀԿԳՄՄՆԳՀԾՁԲ-20/164 3-րդ չափաբաժին

Կ. Տ. Հաճախորդի ստորագր.՝ _____

_____ Բանկի ստորագր. _____